



ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԷԶՄԻԱԾՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԹԻԼԻԱՍՈՒՄ՝

Մայիսի 27-ին, ինչպես գրել էինք «էջմիածին» ամսագրի նախորդ համարում, Անթիլիասի Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում տեղի պիտի ունենար հանդիսավոր Պատարագ և մաղթանք Ս. Էջմիածնի տոնի կապակցությամբ: Այս մասին Կաթողիկոսարանի դիվանը նախապես հայտարարել էր Բեյրութի հայ թերթերում: Եկեղեցում և բակում դրվել էին բարձրախոսներ: Անթիլիասը տոնական կերպարանք էր ստացել: Բեյրութի հայրենաբաղձ և Հայրենիքի ու Մայր Աթոռի կարոտով ապրող հայերը ժամ առաջ ավտոներով շտապել էին Անթիլիաս՝ եկեղեցում տեղ գրավելու համար:

Հանգերի ղողանջը ազդարարեց Ս. Պատարագի սկսվելը: Մենք այդ օրը հնարավորություն չունեցանք պատարագելու, որովհետև մի քանի օր առաջ էինք հիվանդությունից ապաքինվել: Պատարագին էր Եգիպտահայ թեմի առաջնորդ գերաշնորհ տեղ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը:

Տոնի կապակցությամբ եկեղեցում, ինչպես ստում են, ասեղ գցելու տեղ չկար: Կաթողիկոսարանի ամբողջ բակն ևս բռնված էր հավատացյալներով: Երգում էր Կաթողիկոսարանի Դպրեվանքի քառաձայն խումբը, հագած միաձև գեղեցիկ շապիկներ: Խումբը դեկավարում էր բարձրապատիվ տեղ. Գնել վարդապետը:

«Հայր մեր»-ից առաջ շուրջառ, գավազան ու խաչ աննելով բեմ բարձրացանք և խոսեցինք օրվա նշանակության մասին:

Պատարագից հետո, ինչպես նախորդ համարում ասել էինք, հանդիսավոր մաղթանք կատարվեց Ս. Էջմիածնի անշարժության, անասանության և պայծառության համար:

Մաղթանքի ավարտումից հետո հոգևորա-

կան դասով դիմեցինք Անթիլիասի Կաթողիկոսարան, ուր մահճի մեջ պառկած էր ժողովրդասեր Գարեգին Ա. Կաթողիկոսը: Կաթողիկոսարանի բակում հոծ բազմությունը շրջապատեց մեզ, խնդրելով վերադարձին իրենց ողջույնը հաղորդել Հայրենիքի իրենց եղբայրներին ու քույրերին:

Ժողովրդի բազմության միջից մենք մեծ ղոճավրությամբ բարձրացանք Կաթողիկոսարան՝ Վեհափառ Գարեգին Ա. Կաթողիկոսին շնորհավորելու Ս. Էջմիածնի տոնի կապակցությամբ: Ժողովուրդը հրճվագին լցվեցավ Կաթողիկոսարան:

Տեղ. Մամբրե արքեպիսկոպոսը և մենք մտանք Վեհի ննջարանը: Վեհը նստած էր գահավորակի վրա: Նա երբ իմացավ, որ ժողովուրդը ցանկանում է իրեն տեսնել, կամեցավ դուրս գալ և խոսել: Միջանկյալ ասենք, որ բժիշկները արգելել էին Վեհին խոսել, որովհետև խոսելիս նա շատ էր հուզվում: Նրան խնամող բժշկական քույրը արդիվ հանդիսացավ՝ ասելով. «Վեհափառ հայրիկ, մի՛ երթաք, բժշկապետները Ձեզի արգելած են խոսել»: Վեհը, ջղայնացած, ասաց. «Մա հոգևոր գործ է և ոչ բժշկական, բժիշկներն իրավունք չունեն հոգևոր գործի մեջ խառնվելու»: Հիվանդապահուհին ակամա հնազանդվեց ծերունազարդ Վեհափառին: Վեհափառը վերցրեց իր ձեռնափայտը, և, առանց վեղարի, քրոջ և մեր օգնությամբ դահլիճ մտավ: Ժողովուրդն իր սիրեցյալ Կաթողիկոսին տեսնելով բացազանչեց. «Կեցցե՛ք Վեհափառը, առողջություն և երկար կյանք մեր հոգևոր Հորը»: Վեհափառին նստեցրինք կաթողիկոսական գահի վրա: Ժողովուրդն ակնապիշ նայում էր ու սպասում նրա հայրենասիրական, եկեղեցասիրական խմբերին: Վեհը մի պահ իր հիվանդ հայացքն ուղղեց ժողովրդի վրա: Դահլիճում տիրում էր հարգալից, խորին լուրջություն: Վեհը հուզ-

1. Սկիզբը ամսագրի 1951 թվի հուլիս-օգոստոս համարում:



Կիլիկիո Կաթողիկոսության Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին և
Նահապետակալ հուշարձանը Անրիխատում

ված էր: Նրա մագաղաթի գույնն ստացած հաճելի դեմքն ու ճակատը լուսավորվել էին արեգակի առատ ճառագայթներով: Հայրենասեր Կաթողիկոսը, որ մի քանի րոպե առաջ դժվարանում էր խոսել, այժմ շունչ ու հոգի ստացավ, ոգևորվեց, մոռացավ իր հիվանդությունը և սկսեց խոսել. «Իմ սիրելի՛ զավակներ, Հայաստանյայց Նկեղեցին այսօր հանդիսավոր տոնում է իր մեծ սրբություն Ս. Էջմիածնի տոնը: Գրեթե ի՜նչ խոշոր դեր է կատարել Էջմիածինը մեր քաղաքական ու հոգևոր ասպարեզներում— չափազանց մեծ: Մենք ձեզ հետ ուրախ ու երջանիկ ենք, որ Ս. Էջմիածինը 1650 տարի է ի՜նչ գոյություն ունի: Լուսավորչի գահի վերա է բազմած Մեր սիրելի ավագ եղբայրը՝ հայրենասեր ու բաղձնահամար Գեորգ Զ.ը: Աղոթենք, որ Տերը միշտ լինի Մեզ հետ, մեր Նկեղեցու հետ, մեր ժողովրդյան հետ: Ցանկանում ենք մեծ եղբորս առողջ ու երկա՛ր, երկա՛ր կյանք: Նրա կյանքը շատ նարեկ է Հայ Նկեղեցու համար, թող Տերը նրան պարգև արձատրություն... Օրհնում ենք ձեզ, իմ զավակներս: Ծնորհակալ եմ, որ ինձ այցի եք եկել: Մենք էլ, ոչինչ, դանդաղորեն առողջանում ենք: Ծիշտ է, շատ տանջվեցինք, բայց Բեյրութի մեր հայ բժիշկները Մեզ լավ են նայում: Թող Տերը ձեզ ու Մեզ օգնական, պահպան լինի, ամեն»: Ժողովուրդը ավելի ևս մոտեցավ իր Հովնապետին, և հուզված ու արտասվաթոր աչքերով համբուրեց արժանավոր ու մեծ գիտնական Հայրապետի Ս. Աբր:

Այդ օրը, տոնի առնչությամբ, Կաթողիկոսարանում ճաշկերույթ էր կազմակերպված, որի ընթացքում առաջարկվեցին բաժակաճառեր՝ մաղթելով երկու սիրեցյալ Կաթողիկոսներին արևշատություն, Ս. Էջմիածնի և Անթիլիասի կաթողիկոսական և Ս. Երուսաղեմի ու Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռներին անսասանություն և համերաշխ ու միասնական կյանք: Վեհափառ, հիվանդության պատճառով, ընդհանուր ճաշկերույթին չէր մասնակցում:

Հաջորդ օրերը շարունակվում էին զանազան հասարակական կազմակերպությունների այցելությունները: Այս կապակցությամբ պետք է նշել լիբանանահայության զգալի մասի միասնական առողջ մոտեցումը և ճիշտ գնահատականը հայ ժողովրդի ազնիվ բարեկամի՝ ռուս ժողովրդի նկատմամբ: Այստեղ տեղին է հիշել Սահակյան վարժարանում հաճընցի մի ծերունու հայտարարությունը.

«Ռուս ժողովուրդը մեր վառ արևն է. Աստված հավիտենական անմար պահե այդ արևը»:

Մայիսի 24-ին մեր պատգամավորությունը այցելեց Ազունիի ազգային բուժարանը, որը գտնվում է Բեյրութից մոտ 20 կիլոմետր հեռավորության վրա: Մեզ ընկերացան Նրուսաղեմի հայոց պատրիարքական տեղապահ ամենապատիվ տեր Նդիշե արքեպիսկոպոսը (այն ժամանակ դեռ վարդապետ) և գերաշնորհ տեր Դերենիկ հայսկոպոսը:

Ազունիի ազգային բուժարանը գտնվում է Լիբանանի լեռներում, շատ գեղեցիկ ու վայրի բնության մեջ: Թոքախտավորների բուժարան է այն. այնտեղ բուժվելու են գալիս ոչ միայն Լիբանանի, այլև Սիրիայի, Պաղեստինի, Իրաքի և Նզիպուտի հայ թոքախտավորները: Շատ քիչ գալիս են նաև այլազգի հիվանդներ:

Անթիլիասից դուրս գալով, մեր ավտոները անցան Բեյրութի կողքից, ապա ոլորապտույտ ճանապարհներով սկսեցին վերել բարձրանալ: Հասնելով բարձունքին, նրանք սկսեցին մի նեղ խճուղով վայրէջք կատարել դեպի բուժարան: Ազունիի բնությունը շատ է նմանվում մեր Սիսիանի բնությանը և կարծես նրա մի կտորը լինի՝ պոկված ու Լիբանան ընկած. մեծ ու փոքր լեռներ, խորը ձորեր, ժայռեր...

Բուժարանի շենքը երեքհարկանի է, ունի բազմաթիվ սենյակներ հիվանդների համար, ինչպես և վիրաբուժության առանձնասենյակներ, լաբորատորիաներ, ճաշարան, գրադարան-ընթերցարան, սենյակներ բժիշկների և գթության քույրերի համար և այլ օժանդակ շենքեր: Բուժարանը բարեկարգ վիճակ ունի: Ի պատիվ բուժարանի բժիշկների և անձնակազմի պիտի ասել, որ հիվանդները սրտացավ խնամվում են, շատերն են առողջացած վերադառնում իրենց տները: Բժիշկներից մեծ հեղինակություն ունի պրոֆ. Մկրտչյանը, որը թոքերի հիվանդության լավագույն մասնագետն է համարվում Միջին-Արևելքում: Անհրաժեշտ է նկատել, որ բուժարանի գոյությունը ինքնին պատվարեք ձեռնարկ է ո՛չ միայն լիբանահայության, այլև Սփյուռքի ողջ հայության համար: Իրավացի է Նորին Ս. Օծություն Գարեգին Ա. շնորհազարդ Կաթողիկոսը այցելուների դրքի մեջ նշել. «Բարեսիրական հաստատությունները քրիստոնեական կրոնի և քաղաքակրթության ծաղիկներն են, սիրո և գթության զգացմունքից բխած երևույթներ... Այդպիսի ծաղիկները չեն

բուսանում տգիտության և անհասկացողության ժաշուի վերա, այլ մարդասիրությամբ և քաղաքակրթությամբ օժտված ժողովրդի մեջ: Մենք ուրախանալ կարող ենք, որ այսպիսի մի հաստատություն ունենք այս հյուրընկալ ափերի վերա»:

Բուժարանի սպասարկող անձնակազմը նախապես լուր ունի մեր այցելության մասին. բժիշկները, դժուրության քույրերը սիրալիր դիմավորեցին մեզ: Մեզ դիմավորողների մեջ էր բուժարանի քարտուղարը՝ Ժանը, որին մենք «փեսա» էինք անվանում, որովհետև նշանադրված էր Վեհափառին խնամող դժուրության քույրերից մեկի հետ: Բուժարանի անձնակազմի առաջնորդությամբ մենք այցելեցինք

ցանք երրորդ հարկը, հերթապահ բժշկի սենյակը:

Այստեղ հերթապահ բժիշկը մանրամասն զեկուցեց բուժարանի հիմնադրման, նրա ներկա վիճակի, հիվանդության բուժման նոր եղանակի մասին և այլն: Բժշկի զեկուցումից հայտնի դարձավ, որ 1950 թվականի ընթացքում բուժարանն ունեցել է 128 հիվանդ, որոնցից 97-ը հայեր են եղել, իսկ 31-ը՝ օտարներ: Տարվա ընթացքում հիվանդների մեծ մասը փոփոխվել է, առողջացողները մեկնել են իրենց տները, եղել են և մահացածներ, նորերն են եկել, համեմալն դեպս 1951 թվի սկզբին բուժարանն ունեցել է 138 հիվանդ, նախկինից 10 ավելի: Հիվանդների



Վահան, Նդիշե և Դերենիկ սրբազանները՝ Ագունիեի բուժարանի անձնակազմի հետ:

տղամարդկանց և կանանց բաժինների միշտ սենյակներ, եղանք ճաշարանում և գրադարան-ընթերցարանում, տեսանք նաև անկողնում պառկած ծանր հիվանդներին:

Հիվանդները դիմել էին բուժարանի անձնակազմին խնդրելու մեզ, որ մենք լուրեր հաղորդենք Հայրենիքից: Չմերժեցինք: Հիվանդները հավաքվեցին գրադարան-ընթերցարանում: Մենք համառոտակի տեղեկություններ տվինք մեր ծաղկած Հայրենիքի մասին: Վերջում, հիվանդները ոգևորված մեր տեղեկություններով, ոտքի կանգնեցին և երկար ծափահարում էին: Մենք «պահպանիչ» ասեցինք հիվանդների վրա և ապա բարձրա-

մեծ մասն ընդունվում է ձրի, սակայն կան և վճարովի բուժվող հիվանդներ:

Մի բան, որ վատ տպավորություն թողեց մեզ վրա, այդ վճարովի ընդունված հիվանդների բաժանված լինելն է դասակարգերի, համաձայն իրենց մուծած վճարի: Առաջին կարգի հիվանդների վրա ավելի մեծ հոգածություն է ցուցաբերվում, քան երրորդ և երրորդ կարգի հիվանդներին: Հիվանդ մարդկանց մեջ այդպիսի խտրություն դեռ ժամանակակից քաղաքակրթված մարդկության համար, մանավանդ քրիստոնյաներին, երբեք պատիվ չի բերում:



Բժշկի ղեկուցումից հետո մեզ տվին այցելունների մատյանը, ծանոթանալու և մեր տպավորությունները գրելու համար: Մատյանից երևաց, որ բազմաթիվ աչքի ընկնող մարդիկ են եղել բուժարանում և շատ գովասանական խոսքեր են գրել բուժարանի մասին: Մենք ևս գրեցինք մեր տպավորությունները:

Բուժարանի դահլիճներից մեկում փոքր ինչ հանգստանալուց և հյուրասիրվելուց հետո, բուժարանի անձնակազմի հետ դուրս եկանք բակը և նկարվեցինք: Մեզ ճանապարհ դնելու համար բակ էին դուրս եկել նաև հիվանդներից ոմանք:

Շնորհակալություն հայտնելով բուժարանի աշխատողներին և առողջություն մաղթելով հիվանդներին, մենք նստեցինք ավտոները և վերադարձանք Անթիլիաս ոլորապետությունում ճանապարհներով:

Բուժարանի այցելությունը ծանր տպավորություն էր թողել մեզ վրա: Մեր մտքից երբեք չեն հեռանում անկողնում պառկած այն հիվանդները, որոնք կռվում էին մահվան դեմ իրենց ապրելու իրավունքի համար: Մի կողմից մենք գոհ էինք աղաչյին նման բուժարանի գոյությունը տեսնելով, մյուս կողմից մեզ խորը ցավ էր պատճառել նրա նյութական խեղճությունը: Ես մտածում էի, թե ի՞նչ դժբախտ են մեր տարագիր հայերը. նրանք ոչ միայն հեռու են Հայրենիքից ու կարոտ նրան, այլև զրկված են հայրենի բարեխնամ կառավարության հոգածությունից:

Հունիսի սկզբներին Վեհափառի առողջական վիճակը զգալիորեն ծանրացավ: Միջերկրական ծովի ափին գտնվելու պատճառով, Անթիլիասի օդը խոնավ էր ու գաղջ: Բնականաբար հիվանդ Վեհին այլևս հնարավոր չէր այդտեղ պահել, ուստի և մի քանի օրից հետո նրան տեղափոխեցին մոտակա ամառանոցներից մեկը՝ օդասուն Այն-Նար ամառանոցը: Վեհի բնակարանը գտնվում էր մի բարձրագիր բլրակի վրա՝ շրջապատված հնամենի մայրիկներով: Համարյա ամեն օր մենք այցելում էինք Վեհափառին և վայելում նրա հյուրասիրությունը:

Մեր մեկնելուց 4—5 օր առաջ, Վեհը պատվիրակներին իր մոտ ճաշի հրավերեց: Սեղանին ինքն ևս մասնակցեց: Վեհը առաջին բաժակաճառը նվիրեց Ս. Էջմիածնին և նրա Գահակալին: Հոտնկայս երգեցինք հոգեպա-

րար «Էջ Միածինն ի Զօրէ» շարականը: Վեհն առանձին հպարտությամբ հայտարարեց, որ այսօր մեզ հյուրասիրելու է «Ղարաբաղի խորոված»ով: Ինքն ևս փոքր ինչ ճաշակեց: Այդ օրը Վեհափառի տրամադրությունը շատ բարձր էր, նա անվերջ կատակում էր: Ընդհանրությից հետո հրաժեշտ տալով՝ վերադարձանք Անթիլիաս:

Խորապես վշտացանք, երբ նույն երեկոյան մեզ հայտնեցին, թե մեր սիրեցյալ Վեհափառի առողջությունը վատացել է: Դարձյալ բժիշկներ հրավիրվեցին, որոնք գտան, հիւրավի, որ դրությունը լուրջ է: Մեր հրաժեշտի օրը Վեհափառը չափազանց թույլ էր: Երկյուղածությամբ համբուրելով Վեհի օձյալ Աջը՝ բարեմաղթեցինք շուտափուլթ ապաքինում: Նորին Ս. օծությունը համբուրելով մեր ճակատը, հազիվ լսելի ձայնով օրհնեց մեզ, Էջմիածնի միաբանությանը, բարեմաղթեց Ս. Տ. Գեորգ Զ.ին երկարակեցություն: Մեր տեսակցությունը կարճ տևեց, որովհետև Վեհը մեծ դժվարությամբ էր արտասանում ամեն մի խոսք: Արտասվաթոր աչքերով դուրս գալով մեծ հայրենասերի ու եկեղեցականի ննջարանից՝ ողջագուրվեցինք տեր Փառեն սրբազանի և Բաբգեն հայր սուրբի հետ և ուղևորվեցինք Անթիլիաս:

Հասնելով Անթիլիաս, մենք սկսեցինք պատրաստություն տեսնել վերադարձի համար: Հոռոմից ստացված անսպասելի մի հեռագրից իմացանք, որ հանգուցյալ Արտավազդ արքեպիսկոպոսը եկել է Հոռոմ և ցանկանում է մեզ, որպես Ամենայն Հայոց Հայրապետի ներկայացուցիչների, արժանավայել ընդունելություն ցույց տալ:

Ցավալին այն էր, որ մեկնելու վիզաներ ստանալու գործը ձգձգվեց. որոշ դեսպաններ դժվարություններ հարուցեցին տրանզիտ վիզաներ տալու խնդրում՝ թույլտվության համար հարցում անելով իրենց կառավարություններից: Այդ դժվարությունը ոչ միայն մեզ համար էր, այլև մեզ ընկերակցող Երուսաղեմի Հայոց պատրիարքական տեղապահ ամենապատիվ Եղիշե արքեպիսկոպոսի և իր երկու ընկերակիցների համար, որոնք մեզ հետ միասին գալիս էին Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ եպիսկոպոսական կոչումն ընդունելու համար:

(Շարունակելի)